ԱՌԱՔԵԼ ՊԵՏՐՈՍԻ
ԱՎԱԳՅԱՆ

Ծնվել է 1895թ., Երևանի նահանգում, արհեստավորի ընտանիքում:
Սովորել և ավարտել է երկդասյա զեմստվոյական, ապա քաղաքային չորսդասյա ուսումնարանը: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, եղել է պարտիզանական հեծյալ գնդի հրամանատար: Աշխատանքային գործունեությունն սկսել է 1918 թվականից, աշխատել է Երևանի ավտոձեռնարկությունում՝ որպես վարորդ: 1921 թվականից անցել է կուսակցական-տնտեսական աշխատանքի: Պաշտոնավարել է ՀԽՍՀ պարենավորման ժողովրդական կոմիսարիատում (1921-1922):
1922թ. հուլիսի 29-ին ընտրվել է Երևան քաղաքի և գավառի խորհուրդների նախագահ և պաշտոնավարել մինչև 1923թ. հունիսի 18-ը: